ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 237 – Ա 04 հուլիսի 2019 թ.

ԱՐՄԵՆ ԶՈՀՐԱԲՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ ու 209-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանելու մասին» N 1239-Ն որոշումը

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Արմեն Զոհրաբյանին 2019 թվականի հուլիսի 4-ից հուլիսի 5-ը ներառյալ, երկու օրով գործուղել ք. Երևան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե, «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի Ալվարդ Վարդանյանի անվան N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի N 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնանորոգման աշխատանքների հետ կապված քննարկումներին մասնակցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

04.07.2019

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք.Գավառ

04.07.2019 10:01:50 GRIGORYAN NAREK 1610910273